ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«13» 07 2012թ.

N 90

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու կողմից հաստատված 2012 թվականի համայնքի բյուջեի վերաբաշխված հատվածները, նախահաշիվները և համայնքի ղեկավարի ժ/պ-ի որոշումը:

Առդիր՝ 27 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6393-12
«13» 07 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունիսի 2012 թվականի N 12

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 29-ի N 2-Ն որոշումը և գնումների համակարգող Մայիս Աբրահամյանի 2012 թվականի հունիսի 22-ի զեկուցագիրը, *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի մանկապարտեզի դպրոցահասակ երեխաներին նվերներ հատկացնելու նպատակով համայնքի 2012 թվականի բյուջեից տրամադրել 28,0 հազար ՀՀ դրամ գումար:
2. Համայնքի 2012 թվականի բյուջետային հիմնարկների ծախսերի նախահաշվում կատարել վերաբաշխում՝
   1) կառավարման ապարատի՝ 01.1.1 բաժնի՝
      ա) 4241 հոդվածից 13,0 հազար դրամն ուղղել 4239 հոդվածին.
      բ) 4221 հոդվածի 4-րդ եռամսյակի գումարը տեղափոխել 2-րդ եռամսյակ.
   2) այլ մշակութային կազմակերպություն 08.2.4 բաժնի՝
      ա) 4239 հոդվածից 28,0 հազար դրամ գումարն ուղղել 4237 հոդվածին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հունիսի 25
գ. Այգեկ